

ՆՏԴ 82.09

Գրականագիտություն

**ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
«ՓԱՐՎԵՄ ԲԱԼԵՆՈՒՆ՝ ՉՄՐՄԻ...» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ**

Ա. Աթայան

Խոստուն վերնագիրը շատ բան է ասում բանաստեղծ Դավիթ Միքայելյանի ստեղծագործական աշխարհի մասին, ուր զգալի են արդեն հասուն բանաստեղծի զգացումների անուրանալի խտացումներ, պատկերային յուրօրինակ հյուսվածքների գունազեղություն և հետաքրքրաշարժություն, իսկ որ կարևորագույնն է՝ անսահման լույս ու արև, որ յուրաքանչյուր բանաստեղծի գոյության իմաստն է, մնայունության գաղտնիքը:

Բանաստեղծը կայանում է, երբ մարդու և աշխարհի դաշինքի սահմանագծում չեն նշմարվում հանցավոր շեղումներ, որոնք աններդաշնակության քառում մեղցնում են անկեղծ զգացումները: Դրանից էլ տուժում է բանաստեղծական տողը:

Դ. Միքայելյանը նախ և առաջ ապահովում է բանաստեղծ-ընթերցող կապը՝ այն հաստատ համոզմունքով, որ ինչքան զրոյր մոտ է բնությանն ու երկրին, որքան խորն են կապվածության արմատները, այնքան փարթամորեն վերընձյուղվում են բողբոջները, այնքան դյուրին է նշմարվում աշխարհի ամբողջականությունը:

Եթե բանաստեղծը ներշնչված է մարդու և աշխարհի սիրով, ապա բնական է հնչում հույզը, ապրումը, այնքան զուլալ է պոեմական երևակայությունը: Դ. Միքայելյանի պոեզիայի գերող ուժը սերն է մարդու, նրա արմատների, օջախասիրության, պատվախնդրության, բարձր բարոյականության հանդեպ:

Ամբողջության մեջ գիրքը կյանքի գեղեցկագույն էջերի փնտրտուք է: Ոչ բոլոր բանաստեղծներին է հաջողվում որոնումների մեջ հեշտ շոշափել կյանքի և ժամանակի զարկերակը, հեշտությամբ սպեղանի դնել ժամանակի ցավոտ խնդիրներին, կարեկցել, գթալ յուրովի, մարդկայնորեն, փորձել լավով վարակել, վատի մեջ անգամ փնտրել լույսի հյուլե, բարության նշխար:

Գրքի մեծագույն արժեքը թերևս հեղինակից դեպի ընթերցողի հոգին հորդացող ապրելու, հարատևելու լույսն է, որ ճառագում է թումանյանական «վառվել ու հուր եմ դառել» իմաստասիրական ճմարտությունից: Դավիթ Միքայելյանի ապրելու և ստեղծագործելու բանաձևն է դա, որից հորդում է բարձր բարոյականության կենսակերպով համեմված լույսը: Ժողովածուի ատաղձը հյուսվում է հեղինակի կյանքի դասերից, հոգում կուտակված անկեղծ խոհերից ու որոնումներից: Գտնումներով է պայմանավորվում ճիշտ ապրելու պատգամը: Բազմաթիվ հարցադրումներ ծնվում ու մարում են՝ աննշմար, խաղաղ, հանգիստ՝ առանց ճիգի հյուսված տողերի մեջ, ուր պաճուճապատանքը տնդի է տալիս անթաքույց զգացումների առաջ:

Դ. Միքայելյանի պոետական ուղին սկսվում ու հարթվում է «արևավարի», ասել է թե՛ լույսի հեղինդով: Պոեզիայում նորի, լուսավորի խորհրդանիշ արևը նաև ներշնչանքի հավերժող աղբյուր է.

Արև, իմ արև,

Դու ներշնչանքիս հավերժող աղբյուր,

Ըմպեմ թող երգը արդար շուրթերիդ,

Որ ճամփասս հարթեմ... արևավարի:¹

Արևի ցուլքերը հորդահոս են պահում պոետական ներշնչանքի ակունքները, որոնցից են հայրենի հողն ու ջուրը: Արևով օծված հողի երգն իմաստուն է, ուժ է հաղորդում մարդուն, որը հողի երգով առողջ հունդի նման ծլում ու ձուլվում է երկնին:

Երկինք ու երկրի անբակտելի կապն ենք տեսնում Դ. Միքայելյանի բանաստեղծություններում: Երևույթների էության մեջ բանաստեղծը սուզվում է իր ոճով ու ոգով, իր ձևով և յուրօրինակ համեմատությունների միջոցով հասնում է ընդհանրացման, որի համար գյուտ են դառնում կոնկրետ առարկայական երևույթները: Դրանք հորդում են դեպի կյանք, աշխարհ, հայրենիք: Ընդունված ճշմարտություն է՝ յուրաքանչյուր առարկա կամ պատկեր ճանաչողական դառնալու համար պետք է հոգեբանական հիմք ունենա, դառնա հեշտրնկալ, դառնա շարժում, իմաստավորում: Այս առումով Դ. Միքայելյանի ժողովածուն էջ առ էջ շարժում է՝ դեպի կյանք, դեպի գեղեցիկն ու վսեմը:

«Ջրույց արևի հետ» բաժինը նպատակամետ մուտք է, քանզի բանաստեղծի աշխարհը արևի ու լույսի հետ է, քանզի կապվում է մոր կերպարի հետ, որը ջերմություն է բաժանում իր բալիկներին՝ մոմի պես վառվել-հավլելով: Օրերի հետ հավերժում է մայրը՝ օջախի պահապան հրեշտակը.

Արև, դու էլ մորս նման

Միշտ վառ պահիր ճրագն իմ տան,

Որ բալիկն իմ՝ ցորեն հատիկ,

Հասակ առնի թևերիդ տակ

Ու հառնի վե՛ր,

Ու հառնի վե՛ր...

Դու էլ արև... արևաշատ իմ մայրիկն ես:²

Ժողովածուն մտերմիկ ձայների որոնում է, երազ աշխարհում սփոփանքի ու հանգրվանի փնտրտուք, որ գերծ է ներքին ջղագրգռումներից, ներքին խռովից: Ոչ թե՛ ոտանավորական մոլուցքն է բանաստեղծին տանում դեպի երևույթների փնտրտուքը, այլ խոհուն ու համեստ կեցվածքը ընթերցողին մտցնում է բանաստեղծական աշխարհ, զգացումների պոետական կիզակենտրոն, հոգու թաքուն գանձարանները, ուր լույս ու բերկրանք կա, ապրելու տենչ:

Արդի պոեզիան աղբատ է առանց փիլիսոփայական խորհրդածության ու պրոբլեմայնության:

Արցախ աշխարհը, հայրենի օջախը, տունը, բակը բանաստեղծի ներքին էությունն են, ոչ զարդարանք կամ վարագույր: Դրանք իմաստասիրական ընդհանրացումներ են՝ օջախի ամբողջություն, ապուպապների ապրեցնող ոգի, բարձր ու վսեմ բարոյականություն, ազգայինին կառչելու հույս ու հավատ: Ամուր կառչենք արմատներին, որ կյանքի դաժան հողմերից չտապալվի կյանքի կենսունակ ծառը. ահա բանաստեղծի ցանկությունն ու պատգամը, որ բխում է հատկապես ժողովածուի «Հայրենական» շարքից:

Ապուպապոտ օջախի բուրմունքով հագեցած, հայրենի հողի մանուշակաբույր արմատների համ ու հոտով պատգամներ ու խորհուրդներ են բանաստեղծությունները՝ ուղղված ծնված ու ծնվելիք սերունդներին: Աներեր է բանաստեղծի հավատի ծառը, հուշն ու հիշողությունը հին ու նոր հասցեներ են, դեպի ուր ուղղվում է պոետի հայացքը.

Տարիներն անփույթ

Սահում են, գնում,

Վերհուշ են ապրում կարոտներս,

Երազիս ճամփով լեռներն են փախչում

Մանկության խելառ նժույզներս...³

«Մայրական» շարքի տրիոլետներն ու բանաստեղծական մյուս տեսակներն իրենց զեղարվեստական ձևի մեջ խտացնում են և՛ մոր օրհնանքը՝ որպես մանկութ օրերի անմար լույս, և՛ մայրական քաղցր գիրկ, և՛ մշտահունչ ու մորմորուն երգ («Այս, այնպես եմ ես կարոտել մորս ձայնին», «Գնամ մորս երգը խել...»), «Վախենում եմ», «Մորս աչքերը», «Տրիոլետներ մայրիկիս»), և որդու մոլոր ճամփին լույս սփռող աչքի լույս.

Սիրտս մասնմաս

Նվիրեմ բոլոր հիվանդ մայրերին,

Որ մահը պարտվի նրանց ոտքի տակ...⁴

Ժողովածուի սիրտ երգերը ցաված հոգու ճիչ են, երբեմն անգուսպ խանդի զգացումից ծնված երգեր, օտարոտի զգացումների ցավ, որից «արտասվում են հոգու լարերը»: Հասուն սիրտ արտահայտություններ են «Հուշ էր, անցավ», «Ուր է թե՛ հասկանաս», «Թե՛ որ չլինեն», «Ասա, մինչև երբ» բանաստեղծությունները:

Սիրտ ժամանտիկան մխում է նաև հասուն սիրտ արտահայտություններում, ուր կան կենսափորձից ծնված անկեղծ ու ջերմ զգացումներ.

Առանց քեզ մխում են երգերս,

Գարունս չի բացվում առանց քեզ,

Առանց քեզ անգոր են ձեռքերս,

Ես թևատ կռունկ եմ առանց քեզ:⁵

Հետաքրքիր նորաբանությունները շենշող են դարձնում պատկերային համակարգերը («Ծիծաղդ թող խարույկվի գրկիս մեջ», «այրել կարոտը ու տաքանայ», զարունքվել, երկունքվել և այլն):

Բանաստեղծի սիրտ հեքիաթը շատ մոտ է իրականությանը: Երգերը հուզառատ են, հոգեթով, կարոտներով ու կսկիծներով, նաև՝ ակնհայտ

Կենսափորձով լնցուն: Կյանքից ծանր դասեր առած փորձված այր մարդու խոհեր են դրանք՝ խորախորհուրդ ու վերապրված:

Դ. Միքայելյանի սերը բարոյական մեծ ուժ է, որ հարստացնում և իմաստավորում է մարդու կյանքը, բազմապատկում հավատը կյանքի նկատմամբ: Տառապանքի արժեքը մեծանում է, երբ սիրո մեջ առկա է բացսիրտ անկեղծությունը.

Մինչև ե՞րբ պիտի
Տունս ցուրտ մնա, դուռս փակ մնա,
Եվ ձյունը անվերջ իջնի տանիքիս...
Ասա, մինչև ե՞րբ:
Մինչև ե՞րբ պիտի
Արևը ինձնից խռոված մնա,
Կարոտը իմ մեջ խորովված մնա,
Ասա, մինչև ե՞րբ:

...
Մինչև ե՞րբ պիտի ձյուն-ձմռան առաջ
Մերկ տերևի պես մեն-մենակ մնամ,
Որք, անտեր մնամ,
Ասա, սիրելիս, ասա, մինչև ե՞րբ:⁶

Հետաքրքիր ու անմիջական տպավորությունների հյուսվածք են «Սպասումի երգ», «Հավատա, սեր իմ», «Թ՛վացել է», «Սիրո ծառը կանաչում է» բանաստեղծությունները:

Լինելության խորհուրդն է «Խաղողի վազը» բանաստեղծության հիմքում: Վազի աչքերից անվերձանելի թախիժ է ծորում: Բանաստեղծը «տաք ձեռքերով մեղմորեն բռնում է քամուց դողացող նրա մատները...»: Մարմնով սարսուռ է անցնում, որովհետև վազը «գլուխը կախել ու բռնս մեջ լուռ լաց է լինում»: Բանաստեղծի սերը փորձությունների է ենթարկվում, ցավագին հույզերը միմյանց են հաջորդում: Խաղողի վազը իրար է կամրջում սերը՝ տխուր, տառապած, բայց և իմաստուն: Կյանքի, լինելության խորհրդանիշ է վազը: Ասել է թե՛ հարատևում է սերը, հավերժում են զուլալ զգացումները: Բանաստեղծի սիրո բանաձևը նորից հյուսվում է գեղեցիկ ու լուսավոր պահերից: Լուսավոր ու խորհրդավոր է խաղողի վազի արցունքը, լուսավոր է բանաստեղծի անձնուրաց սերը:

Խոհափիլիսոփայական միտքը կրկին դեպի արևն է գնում «Թ՛ե որ չլինեն» ոտանավորում: Արտաքուստ սովորական թվացող միտքը նորից կարևորում է մարդ-արև կապը: Յաված սերը փորձությունների մեջ է, սառնություն ու օտարություն է սփռում, բայց ընթերցողին տանում է դեպի բարոյական մաքրություն: Ահա թե ինչու միմյանց են հաջորդում խիստ հավասարակշիռ վիճակները, որոնք ավելի լուրջ ու խոհուն են դարձնում բանաստեղծությունները:

Հարագատ դարձած իմ օտար աղջիկ,
Ետ տար
Դու այսօր քո պատշգամբի վարագույրները,

Արևը շատ է ուզում քեզ տեսնել...⁷

Դ. Միքայելյանի սիրո բանաձևը հյուսվում է գեղեցկության որոնման ակորդներին, դեպի լույսն ու լուսավորն ընթացող անեղծ զգացումից:

«Լսավարում ինձ մի որոնեք» շարքը Արցախի ճակատագրով ապրող բանաստեղծի սրտի խոսքն է՝ երգերի վերածված հայրենաշունչ բանաստեղծություններ՝ նվիրված գոհված ազատամարտիկների պայծառ հիշատակին: Նորից հավերժում են լույսերը՝ իբրև նշխար-նշխար ժողոված ծաղկեփնջեր, որ արտասվում են վազզեն Սարգսյանի, Աշոտ Ղուլյանի, Մարատ Ավանեսյանի, Դավիթ Պետրոսյանի, Սամվել Զաքարյանի և մյուս քաջորդիների՝ քարն հուշ դարձած շիրիմներին: Այդ բանաստեղծությունները մի-մի դաս ու դպրոց են՝ հավերժահունչ, մշտնջենական, վարակող: Բանաստեղծը չի մոռանում նաև Արցախյան պատերազմից տուն չդարձած հայորդիներին.

Հարազատներս, դե մի արտասվեք,
Սպասեք հաստատ գալիք իմ դարձին,
Լսավարում երբեք ինձ մի որոնեք,
Ձեզ այցի կգամ ես լուսաբացին...⁸

«Տունկանչի հրավեր» է մանկական երգերի խորագիրը:

Ժամանակին Դ. Միքայելյանի մանկագրության մասին հեղինակավոր խոսք է ասել Գ. Գաբրիելյանը՝ Արցախ աշխարհի օրհներգիչը (Լ. Գրիգորյան): Հոգեբանական նրբությամբ հեղինակը բացահայտում է մանկան հուզաշխարհը: Փոքրիկի աչքի առաջ քայլ առ քայլ բացվում են մեր մասունքների դռները՝ դառնալով դաս ու աղոթք:

Մանկան սրամտությունից են հյուսված «Ծերերին շատ չի հարմար», «Կախարդ սունկը», «Ծորակը նիհարում է», «Կաթը ջրիկ է դառել» բանաստեղծությունները:

Հեղինակը սթափ ու դաստիարակող հայացքով է նրեխային ուղղում դեպի կյանք, աշխարհ:

-Մանչ իմ,
Պիտի լավ իմանաս,
Որ սուրբ օջախ ես եկել,
Մաշտոցն այստեղ
Մեր դպրության
Հողն է լույսով ակոսել...⁹

Ժողովածուն զերծ չէ որոշ թերություններից: Երբեմն գեղարվեստական ընդհանրացումները ճապաղ են, որոշ բանաստեղծություններում էլ զգացվում է գեղարվեստական կոնկրետության պակաս: Սրանք ամենևին ստվեր չեն ձգում ժողովածուի գաղափարական հարստության ու գեղարվեստական արժանիքների վրա: Լավն ու դրականը անթաքույց առավելություններ են, որոնք հեղինակի նաև հետագա ստեղծագործական զարգացման նախադրյալներն են:

Ամեն մի արվեստագետ միշտ էլ սրտատրոփ սպասում է իր հիմնական ու կարևոր նրկին: Դ. Միքայելյանի հիմնական նրկը դեռ կծնվի, որովհետև

հեղինակն ունի արդիական ժամանակաշրջանն ու կենսական խնդիրները սեփական բանաստեղծական աշխարհով մեկնաբանելու կարողություն:

Ծանոթագրություններ

1. Դավիթ Միրայնյան, Փարվն բալնուն՝ չմրսի..., [ԼՂՀ ԳՄ հրատ., Ստ. 2012, էջ 18:
2. Նույն տեղում, էջ 15:
3. Նույն տեղում, էջ 56:
4. Նույն տեղում, էջ 90:
5. Նույն տեղում, էջ 117:
6. Նույն տեղում, էջ 112:
7. Նույն տեղում, էջ 107:
8. Նույն տեղում, էջ 155:
9. Նույն տեղում, էջ 169:

Сборник Давида Микаеляна "Обниму вишню, чтобы не замерзла"

А. Атаян

Резюме

"Сборник Давида Микаеляна "Обниму вишню, чтобы не замерзла" 16-ая книга автора, которая является поиском прекраснейших страниц жизни. Этот сборник раскрывает поэтический путь автора, который начинается и протекает гладко. Сборник-это поиск близких звуков, философские обобщения об укреплении очага, высшей моральности, национальной веры и надежды.

Материнские, любовные, патриотические, детские стихотворения свидетельствуют о том, что автор имеет собственные взгляды оценивания жизненных вопросов современности с точки зрения своего поэтического мира.

Collection "Will hug a cherry tree, not to freeze" by David Mikaelian

A. Atayan

Summary

"Collection "Will hug a cherry tree, not to freeze" by David Mikaelian" is the 16th book, which is a search for the most beautiful pages of life. This collection reveals the author's poetic path that starts and runs smoothly. The collection is a close search of sounds philosophical generalizations about the strengthening of the hearth, the highest morality, national faith and hope.

Maternal, loving, patriotic, children's poems suggest that the author has his own views of life evaluation of contemporary issues from the point of view of his poetic world.